

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ.,
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԴՎՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԻ ԱՆՏԻԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Դավիթ Հովհաննեսի այս անտիպ հարցազրույցը՝ «Իմ սկիզբը իմ վերջի մեջ է» վերնագրով, Նախատեսված էր հրապարակել «Գարուն»-ի 2008-ի թ. 1-2-ում: Բայց բանաստեղծը, իր բնույթին համապատասխան, դժգոհ էր և անվերջ շտկումներ էր անում: Ինչպես ասում է՝ «կարող էր ամիսներ, տարիներ մտածել մի բառի համար...»: Բանաստեղծություններն էլ հրապարակելիս, վկայում է կրկին բանաստեղծը, կոչվ էր տալիս յուրաքանչյուր բառի համար: «Չէ՞ որ,- ինչպես ասում է Դավիթը,- այդ բառը ծնել եմ ինչպես մայրը երեխային. երկունքով, արյունով... հնարավոր է կեսարյան հատումով եմ ծնել՝ կյանքս վտանգելով...»: Այդպիսին էր բանաստեղծ Դավիթ Հովհաննեսը՝ շիտակ, հպարտ ու հաղթահասակ, միշտ բանախոսում էր ասես՝ թիկունքը բարձր, հայացքը՝ ներշնչված, ինչպես ասում է՝ բառի ինքնակործան ոգուն հավատարիմ, որ միշտ շոշափում է «թաքնվածը, ողբերգականն ու դրամատիկը»... Ահա ինչու «Գարուն»-ի վաղամեռիկ խմբագիրը՝ Վարուժան Այվազյանը, դեռ 2008-ին, ձեռագիրը հանձնելով ինձ, հույս ուներ հարցազրույցը հասցնել ավարտին և հրապարակել... Հավանաբար խմբագիրը հաշվի էր առել Դավիթ Հովհաննեսի կարծիքը, որ ցանկացել էր իր զրուցակիցը լինի այն քննադատը, ում հետ երկխոսություն կարող էր ունենալ: Ահա ինչու ես երբեք չեմ մոռացել ու չեմ մոռանա այդ տարիների Դավիթ Հովհաննեսին, որ, թերևս, ընդհատվող զանգերով կամ առանձին հանդիպումների ժամանակ «Արևիկ» հրատարակչատանը, սպասում էր թերևս մի բանի, որ իր մեջ կուտակվածը փոխանցի ինձ՝ քննադատին: Իր կարծիքով եկել էր այն քննադատը, որ, վերջապես, կարող էր համակարգել այն վիթխարի ժառանգությունը, ինչ իրենք՝ 60-ականներն էին ստեղծել... Բայց դա ոչ թե երկխոսություն էր, այլ Դավիթի մենախոսությունը՝ ներշնչված, երկար ժամերով, դավիթ-հովհաննեսյան շեշտով, անողոք ու պարտադրող... Նույն ճակատագիրը բաժին ընկավ նաև այս հարցազրույցին, որ սկսվեց երկխոսության

պատրվակով և հետաձգվեց կրկին, որովհետև Դավիթ Հովհաննեսի մե-
նախոսության ժամանակը չէր ավարտվել և...

Այնուամենայնիվ, Դ. Հովհաննեսի սահմանումները այս հարցազրույ-
ցում բացառիկ են, բնորոշ իր պոեզիային: Սկսած վերնագրից՝ «Իմ սկիզ-
բը իմ վերջի մեջ է», դավիթովհաննեսյան բառի սահմանումը, որ ժխտա-
կան նախասկզբ ունի, տանում է պոեզիան սահմանելու, այն «վերակա-
ռուցելու» հունով, որ մետաֆորն է, բառերի միջև ընկած «սպիտակ տա-
րածությունը», որ մի դեպքում Դ. Հովհաննեսը անվանում է «միջնակ»,
այլ դեպքում «բացակ»: Ահա այդ «տարածությունը լցնելու» գախափարն
է, որ սահման չի դնում քերթողի ու ստեղծողի, ժամանակը վերապրողի
միջև: Այդպիսին է Դավիթ Հովհաննեսի կերպավորած բանաստեղծը, որ
եկավ «ուժեղ ու հաղթանդամ»՝ ժամանակի շքեղ ավերակների մեջ կրկին
կործանվելու, մաքառելու բառի հետ, ավերվելու նրա ծանրության տակ,
որովհետև բանաստեղծին տրված բառը, ինչպես Դավիթն է հավելում,
պատիժ է, որ ինքնակործան բան ունի իր մեջ, շնորհ է ու ճակատագիր,
որ մահն է տեսնում, սերն է տեսնում, ճակատագիրը: Ուրեմն՝ ոչ մի հաշ-
տություն բառի հետ, որ ներկայի մեջ տեսնում է անցյալը, գալիքը և...
դեռ ավելին՝ բանաստեղծին էլ խորտակում հավերժի անթափանցույթ-
յան մեջ: Ահա ինչու բառերը «ծնվում են ժամանակի մեջ», ժամանակի
տարածությունը փոխակերպում է նրանց, վերածում «կառուցվածքի»,
որ բանաստեղծության կոմպոզիցիայի առանցքն է, ուստի ընկալվում է
որպես պոետական մետաֆոր, որ «ժամանակի ճեղքվածքն է» արտա-
հայտում Դ. Հովհաննեսի պոեզիայում: Բայց Դավիթի բառերը «անդի-
մակ» են (ինչպես ասում է՝ ճակատային, որ համարժեք է բառի անվանը),
որ սահմանում է՝ բառերը պոեզիա չեն, այսինքն՝ «պոեզիան այն է, ինչ
պոեզիա չէ»: Ճիշտ իր նման...որ բանաստեղծական իր իր նորությունն
ունի՝ խարսխված ժառանգական կապի և գալիքի գրական երազանքի
համադրության վրա: Եվ մեր տարբեր զրույցներից, բանախոսություննե-
րից հետո, որքան էլ Դ. Հովհաննեսը անողոր էր բառի նկատմամբ և ժա-
մանակն իր հետ էր խոսում, այնուամենայնիվ, բառի երկխոսական ոգին
թելադրում էր մի այլ՝ ամբողջականի որոնում, որ պոեզիայի և պոետի
երազանքն էր, ինչը Դ. Հովհաննեսն ընկալեց որպես Փոքր Կտակարան,
այսինքն՝ Գիրք մնացորդաց, որ հետմահու բանաստեղծի ութնյակների
հրապարակումն էր մեկ գրքում, որ, որպես ամբողջականի դրսևորում,
բանաստեղծի հատուցումն է ժամանակի առջև, խոսքի ոլորտի հաղոր-
դակցությունը միաժամանակ: Եվ այդ ճանապարհին Հավերժական հա-
յի ծնունդն է թերևս, որ կտակում է Դավիթ Հովհաննեսը, որպեսզի, երբ

մի օր կանգնի աստու առջև, իբրև հատուցում իր ապրածի, հայտարարի կամ ասի, որ Հավերժական հայի հայտնության ճանապարհը այսպիսին է, բանաստեղծական իր «անձնագիրն է» դա, իր կերպարը, իրեն տրված գոյության արդարացումը, որով կարող է «արդարանալ», կանգնել ժամանակի, աստծո, իր խղճի և մարդկանց առաջ՝ ասելու կրկին՝ ես եմ Հայը և Հայաստանը, և «աստված եմ եսացած»... Սա է Դավիթ Հովհաննեսի պոեզիայի, իր անցած ճանապարհի թողած հետքը, որ պահպանվում է մեր լեզվի, նրա ոգու հիշողության մեջ, որ բանաստեղծի Կտակարանն է:

ԻՄ ՍԿԻԶԲԸ ԻՄ ՎԵՐՋԻ ՄԵՋ Է

«Երգերի պսակ», որ էր՝ «Իմ առաջին գիրքը»

-Ձեր առաջին գիրքը՝ 1974-ին լույս տեսած «Երգերի պսակը», այժմ էլ ընթերցում են, հատկապես երիտասարդները, որպես հաջողված առաջին գիրք: Մինչ այդ՝ 1967-ից տպագրվել էիք «Գալուստե» ամսագրում և հայտնի էիք ընթերցողին: Տպագրվեց նաև «25 տարի անց» խորագրով Ձեր առաջին գրքից դուրս մնացած բանաստեղծությունները: Փորձե՞նք տասնամյակներ անց վերականգնել այդ խաթարված գրքի ուրվապատկերը: Ի՞նչ բանաստեղծական դավանանքներ ունեիք, ի՞նչ խնդիրներ էիք դրել Ձեր առջև, որոնք չհասան ընթերցողին գիրքը կիսվելու, թույլ տվեք ասել՝ կացնահարվելու պատճառով:

- Առաջնեկս պետք է վերնագրված լիներ շատ պարզ, հենց այսպես՝ «Իմ առաջին գիրքը», բայց խմբագիրը պնդեց, որ այդպիսի վերնագիր եղել է, ինքնատիպ չէ, և վերնագրեցին «Երգերի պսակ», ինչի հետ մինչ օրս էլ չեմ հաշտվում: Հավաքել էի 1965-ից մամուլում հրատարակված բանաստեղծությունները, նաև անտիպներ: Բայց միայն վերնագրի հետ չէր, որ խաղեր տվեցին. ամբողջ ժողովածուն հոշոտվեց, և շատ գործեր դուրս մնացին: Վարդգես Պետրոսյանը փորձեց փրկել գիրքս՝ անպայման տպագրված տեսնել, և այդ բարի նպատակով էլ ինձ ուղարկեց Արփա-Սևան կառույցի մասին պոեմ գրելու, ինչն էլ, ինչպես ասում էին, կլիներ այն շոգեքարշը, որ կտաներ գիրքը: Ես իհարկե չէի համաձայնվում, բայց փոխարենն ինձ առաջարկում էին բանաստեղծություններ նվիրել կուսակցությանը, Լենինին, Վիետնամի պատերազմին: Իմ սերնդակիցներից շատերը, գրեթե բոլորը, գնացին այդ քայլին, ես չկոտրվեցի: Մինչև հիմա էլ պահում եմ իմ սկզբունքը և հպարտությամբ պիտի ասեմ, որ լճացման այն տարիներին կարողացա դիմակայել և ոչ մի տող չգրեցի այսպես

ասած այդ կոնյուկտուրային բանաստեղծություններից: Մեկ-երկուսի գրքերը, որոնք հետո հայտնի դարձան, տպարանում շարվածքը ցրեցին և շատ ուշ տպագրեցին: Ես էլ էի կանգնած այդպիսի ճակատագրի շեմին, նախադրմանը՝ գիրք չունենալու, անգիրք բանաստեղծ օժանդակ հավատարիմ: Բայց ես տեսա, որ «ռամկաների» այդ առաջարկության մեջ ռացիոնալ հատիկ կա և գնացի այդ քայլին, որի համար մինչև հիմա չեմ փոշմանել: Մեկ-երկու ամիս նույնիսկ հորատողների հետ աշխատեցի. մինչև հիմա էլ լավ հիշում եմ այդ օրերը, այդ մարդկանց: Եվ գրեցի «Ժողովրդական կառույց» պոեմը, որի համար այսօր էլ չեմ ամաչում: Պոեմում որևէ տեղ տուրք չեմ տվել պրոֆիշիանական գովերգությանը, հակառակը, ծանր պատկերներ են և կան խոհեր, մտորումներ Հայաստանի անցյալի, պատմական արյունոտ էջերի, Սևանա լճի ավազանում ձևավորված դեռևս ուրարտական ժամանակաշրջանի քաղաքակրթության մասին: Ստացվեց մի պոեմ, որը զուտ բանաստեղծական տեսանկյունից շատերի հիացմունքը առաջ բերեց, և գիրքս տպագրվեց այդ պոեմով: Ես այդ գրքից ոչ միայն չեմ ամաչում, այլև հպարտ եմ, որովհետև դիմացավ ժամանակի մեջ և այսօր էլ չի կորցրել իր բանաստեղծական արժեքը: Նորից եմ կրկնում, թե ինչ արեցին այդ գրքի գլխին՝ վերնագրից սկսած, բուբ դանակով մորթել էր նշանակում: Ցավոք, այդ սերնդի գրեթե բոլոր բանաստեղծների գրքերն արժանացան նույն ճակատագրին: Այնպես որ բուբ դանակով մորթելու հանգամանքը միշտ էլ եղել է, և իմ առաջին գիրքն էլ այդ ճակատագրին արժանացավ:

Ինչ վերաբերում է ժողովածուից դուրս մնացած բանաստեղծություններին, դրանք նույնպես դաժան ճակատագիր ունեցան: Ես այդ տարիներից մի սկզբունք որդեգրեցի, ինչին հավատարիմ մնացի ողջ կյանքում, թույլ չեի տալիս իմ տողը կամ բառը փոխեն, հակառակ դեպքում գնում էի ռադիկալ քայլի, ամբողջ բանաստեղծությունն էի հանում: Այդպես, իմ ողջ կյանքը եղել է պայքար գլավիտի հետ, որին շրջանցելու համար այսօր ծիծաղելի թվացող զանազան բաներ էինք մոգոնում: Հիշում եմ, մի երգիծական բանաստեղծության մեջ օգտագործել էի կատաղել բառը, «Ռզնի» շաբաթաթերթի խմբագիրը՝ հայտնի Գիգին, ասաց՝ Ես ինչ բառ է, փոխիր, մարդ եմ, կվիրավորվեն. քննադատներին էր ուղղված: Ասացի՝ դիվոտել, նայեց երեսիս ու ասաց՝ այ, տեսնում ես, որ ուզում եմ՝ կարողանում եմ էլի. շատ լավ է, դիվոտել: Երբ մեկ-երկու տարի հետո բանաստեղծությունը պետք է գրքով տպագրվեր, խմբագիրն ասաց՝ լավ, էլի, ախր Ես ինչ բառ է, փոխիր: Ասացի՝ կատաղել: Այ, շատ լավ է, ասաց, ավելի հանգիստ բառ է, որ ուզում եմ՝ կարողանում եմ էլի: Այդպես անեկդոտիկ վիճակներ

րի էինք հասնում, բայց միշտ չէր, որ հաջողվում էր գլավլիտին շրջանցել և հաճախ ստիպված էինք լինում գրքից ամբողջական բանաստեղծություններ հանել: Այդուհանդերձ, իմ առաջին գիրքը համարում եմ այդ տարիների, հատկապես բանաստեղծական Նոր սերնդի գրահրատարակչական հաջողություն: Բացի այդ գրքում չես գտնի իշխանամետ կամ կուսակցական հովերով պարուրված բանաստեղծություններ: Արփա-Սևան պոեմը գրելով՝ կարողացա խուսափել այդ ամենից: Գրքում հավաքել էի 1964-73 թվականներին գրած բանաստեղծությունները, և այդ տասնամյակը համարում եմ իմ ստեղծագործության առաջին շրջանը:

Հետագայում գրքից դուրս մնացած բանաստեղծությունները «25 տարի անց» խորագրով տպագրեցի «Գարուն» ամսագրում, մի մասն էլ մինչ այդ տպագրվել էր «Բազիլում», և արդեն ամբողջական շարքը գետեղեցի 1989-ին գրված «Աղետի գոտի» գրքում: Շարքը բանաստեղծորեն կապված չէ գրքին, սակայն այդ ժամանակ հրատարակելու այլ հնարավորություն չտրվեց: Այժմ ունեմ մի ծրագիր. տպագրել իմ առաջին գիրքը իր իսկական, նախնական վերնագրով, ճիշտ այն բանաստեղծական ժողովածուն, որը պետք է տպագրվեր 1974-ին: Տպագրելու եմ այնպես՝ ինչպես գրվել է, անգամ ստորակետ չեմ փոխելու: Կան դեռևս անտիպներ, որոնք շատ բաց տեքստ լինելու պատճառով տպագրության չեմ էլ ներկայացրել, դրանք նույնպես ներգրավելու եմ: Գիրքն ունենալու է «Իմ առաջին գիրքը ինչպես պետք է լիներ» խորագիրը, ճիշտ այն տեսքով, ինչպիսին էր 1974-ին, եթե տպագրվեր: Գիրքը կտպագրվի առաջիկա մեկ-երկու տարում, ես այդ քայլով պատմական արդարությունն եմ փորձում վերականգնել: Այդ ժամանակ արդեն պարզ կլինի, թե բանաստեղծ Դավիթ Հովհաննեսի մոտքն ինչպիսին պետք է լիներ, որ չեղավ: Սակայն լավ է ուշ, քան երբեք: Սա, ինչպես ասացի, իմ բանաստեղծական առաջին շրջանն է: Երկրորդ գրքով սկսվում է իմ պոեզիայի երկրորդ շրջանը:

Անցյալ կորուսյալ

-1979-ին հրատարակած Ձեր երկրորդ՝ «Անցյալ կորուսյալ» ժողովածուն նախորդ գրքի գրական սկզբունքի շարունակությունն էր, բանաստեղծական տարածության կարծրացումը Ձեր ներկայանալու ժամանակի մեջ, ինչի հետ, որպես գիրք՝ իր էական կշիռով, անկարող ենք հաշվի չնստել, առավել ևս՝ շրջանցել: Ինչպես էք դիտարկում գրքից գիրք անցումը, հայացքի, զգացողությունների շարունակությունն է, թե Նոր գիրքն իբրև առանձին ստեղծագործական ամբողջություն: Փորձենք փուլերի, շրջանների բաժանել Ձեր շուրջ 40-ամյա գրական ընթացքը:

-Բանաստեղծությունը մետաֆոր է. ոչ ոք նոր բան չի ասում. բանաստեղծությունը թարմ է մետաֆորով: Դիլան Թոմասը մի այսպիսի արտահայտություն ունի. «Մարդ, եղիր իմ մետաֆորը»: Սա է իմ սկզբունքը: Ես մի ինքնակործան բան ունեմ իմ մեջ, անգամ այսպիսի տող եմ գրել. «Եվ իմ կործանման սկիզբը թաղված է իմ վերջի մեջ»: Իմ բանաստեղծությունը միշտ էլ շոշափել է թաքնվածը, ողբերգականը, դրամատիկը. այդ սկզբունքին եմ հավատարիմ եղել իմ ստեղծագործական բոլոր շրջաններում: Ցեխի մեջ տեսել եմ գեղեցիկը, այսպիսի տող ունեմ. «Գեղեցիկ ինչպես ցեխը արևի տակ փայլող»: Զգիտեմ, տեսնելը, յուրովի զգալը, մարդու բնավորությունն է. ես էլ այդպիսին եմ: Միշտ կործանումն եմ տեսել, մահն եմ տեսել, սերն եմ տեսել: Լավատես չեմ եղել և լավատես չեմ, ոչ էլ հոռետես եմ. ես լավ իրազեկված լավատես եմ, այսինքն՝ իրատես եմ: Այդ տեսանկյունից սկզբունքներս չեմ փոխել, հիմա էլ նույնն եմ: Այդ նեգատիվությունը գնալով ավելի խորացել է հատկապես իմ վերջին գրքում: Սակայն արտաքին ձևի առումով դավանեցի պոեզիայի դասական սկզբունքներին՝ իմ հոգու խորքում մնալով նույն դաժան, իրատես, կոնֆլիկտային բանաստեղծը: Ես կյանքում հեշտ չեմ ապրել, իմ տողն ինձ միշտ քրքրել է, բառը միշտ եղել է իմ թշնամին, որն, ի վերջո, ամենամեծ բարեկամն է: Մի բանաստեղծության մեջ, որով էլ հեց սկսվում է «Անցյալ կորուսյալ» ժողովածուն, ասում եմ.

**Դու կյանք չունես ուրիշ, դու հույս չունես ուրիշ,
չունես ուրիշ հավատ, և չունես ուրիշ սեր,
և պատժում եմ ես քեզ - տեր անելով հոսքի,
բայց դա - իմ սիրո նշանն է ամենամեծ:**

Ինձ համար բառը պատիժ է եղել, բայց նաև աստվածային սիրո ամենամեծ նշանը: Եվ այդ հավերժական կռվի մեջ, պայքարի մեջ՝ ինքդ քեզ հետ, բառի հետ, ես միշտ փնտրել եմ միակ բանը, ինձ համար պոեզիան չի եղել բառերի հանրագումար, պոեզիան երկու բառերի միջև այդ միջևակը, սպիտակ տարածությունը լցնելն է, թե չէ բառեր բոլորն էլ գիտեն, բոլորն էլ օգտագործում են: Համոզված եմ, որ պոեզիան տղամարդու գործ է, ծանրագույն գործ է, արհեստ չէ, փեշակ չէ. բառի հետ հավերժական կռիվ է, պայքար է և այդ միջևակը լցնելու խնդիր: Լցրեցի՞ր միջևակը, ուրեմն պոեզիա կա. երեկ էլ, այսօր էլ, վաղն էլ այդ միջևակը լցնողներս մի քանի՝ հոգի ենք, և ինձ հենց այդ մի քանի հոգին են հետաքրքրում: Ինձ համար պոեզիան ոչ թե տաղանդավոր կամ օժտված մարդու գործն է, ովքեր շատ են, այլ բառը բառին քարի պես ագուցելն է՝ նրանց միջև եղած սպիտակ, դատարկ տարածքով: Եվ այդ ագուցելը, որ դաժան ու

դժվարին գործ է, ճակատագիր է, խաչ է, սկզբունքներին հավատարիմ ավելի է խորացել իմ այդ ինքնախարագանիչ դաժան հայացքը: Շատ դժվար բան է վավերական և մնայուն պոեզիա ստեղծելը: Ձևի առումով իմ երկրորդ և հետագա գրքերը՝ «Անցյալ կորուսյալ», «Նոր կյանք», դա ամենևին էլ կյանքը Նորացնելու, փոխելու փորձ չէ. դա դանթեական «լապիտանովան» է, այսինքն՝ մի Նոր կյանք, մի Նոր բանաստեղծական փուլ, Նոր բանաստեղծական աշխարհ, ինչը, ցավոք, ժամանակին շատերը չհասկացան՝ ասելով, թե լավ վերնագիր չէ: Սա ամենաճշգրիտ վերնագիրն է, քանի որ բանաստեղծությունը նաև մեթոդիկա է այն առումով, որ ամեն ինչ պետք է լինի ճշգրիտ, այսինքն՝ պատահական, թափառող, կոպտորեն վերցրած խցկած բառ չպետք է լինի: Ես շատ դժվարությամբ եմ բաժանվում գրած, արդեն հաստատված տողից, անգամ ստորակետից: Ես կարող եմ ամիսներ, տարիներ մտածել մի բառի համար և բանաստեղծությունը լույս աշխարհի չհանեմ, քանի դեռ այդ բառն իր տեղը չի գտել: Հենց այդ պատճառով է գրաքննիչների հետ եղել իմ կռիվը, երբ հեշտ ու հանգիստ փոխում էին բառը: Չէ՞ որ ես այդ բառը ծնել եմ ինչպես մայրը երեխային. երկունքով, արյունով, դժվարությամբ, հնարավոր է կեսարյան հատումով եմ ծնել՝ կյանքս վտանգելով, և մի գրչի շարժումով իմ ծնած երեխային՝ բառը, փոխո՞ւմ ես: Որոշ բանաստեղծություններ՝ ձևի առումով, գուցե գրքից գիրք փոփոխություն են կրել, բայց իմ սկզբունքները մնացել են նույնը: «Երգերի պսակ», «Անցյալ կորուսյալ», «Նոր կյանք», «Տագնապներ», «Մայր Հայաստան». այս հինգ գրքերը, որոնք լույս աշխարհի են եկել 1974-1988 թվականներին, ծանր, անժամանակայնության ժամանակներ էին: Եվ ես այդ անժամանակայնության մեջ, ինձ թվում է, կարողացել եմ իմ հինգ գրքերում էլ երևալ որպես մարդ, բանաստեղծ: Հերոս չեմ եղել, բայց թագավորների աչքերի մեջ նայել եմ ուղիղ, խոտ էլ չեմ եղել, որ տրորեն, անցնեն:

Հերոսների դար չէր, այդ դարը վաղուց էր անցել, բայց մարդկանց աչքերի մեջ ուղիղ եմ նայել և՛ պարզ ճակատով: Այդ հինգ գրքերում, որ ծնվեցին խորհրդային անժամանակայնության տարիներին, ես կարողացել եմ շարունակել իմ առաջին գրքում շոշափվող թելերը: Ես այլախոհ կամ նման բան չեմ եղել. ես փորձել եմ ազնիվ ապրել և՛ որպես մարդ, և՛ որպես բանաստեղծ, ապրել համահունչ՝ կյանքս ներդաշնակելով իմ պոեզիային: Ինչպես ապրել՝ այնպես էլ գրել եմ: Այն կյանքը, որ ես ապրել եմ, ընդունվում էր դժվար, բաց ճակատով մարդ, իսկ երբ այդ կյանքը պոեզիա էի դարձնում, կատաղում, սարսռում, փրփրում էին, ասելով՝ հերիք չի գրել է, դեռ ուզում է տպագրել. և տպագրում էի: Իմ նշած բոլոր

հինգ գրքերում բանաստեղծի այդ կերպարն է, հային՝ հա ասող, չէին՝ չէ, բաց ճակատով, լանջաբաց, բաժակը ձեռին՝ առանց հաշվի առնելու, թե ինչ կմտածեն: Դժվար էր այդպիսի մարդու առաջ կանգնելը, և ես միշտ հարված եմ ստացել թիկունքից, փակ ու գաղտնի քվեարկության զոհ եմ եղել և՛ այն ժամանակ, և՛ հիմա: Արտաքին հանգամանքներն են փոխվել, իսկ մարդիկ մնացել են նույնը:

Այդ հինգ գրքերը մի շրջան է, մեկ ընթացք: Ձևի առումով, կրկնում եմ, մի շարք փոփոխություններ եղան՝ մերձենալ դասական պոեզիայի սկզբունքներին. ես միշտ հակված եմ եղել դասական պոեզիայի, անգամ իմ առաջին շրջանում՝ «անիծյալ բանաստեղծների» այդ սերնդի ժամանակ: Ես մեծացել եմ դասական պոեզիայի կրթությամբ և այդ շոշափուկները տեսանելի են իմ գրքերում, բացի այդ կոտեսնես Նաև արդի եվրոպական պոեզիայի թելերը: Այդուհանդերձ, հատուկ նախասիրություններ չեմ ունեցել: Գողթան երգերից սկսած մինչև այսօր, իմ սիրած մեկ-երկու վավերական բանաստեղծները, այդ ամբողջի մեջ ես եմ և այդ ամբողջն է իմ մեջ: Սա է իմ տիեզերքը, իմ մթնոլորտը, որի մեջ լինելով՝ մատու ժամանակի զարկերակին դրած, զգում եմ, թե դրսում ինչ է կատարվում: Ժամանակային ու արդիականության այդ ընդմիջարկումն ունի իմ պոեզիան:

**Եղել եմ գուցե կոպիտ, լեզվանի,
սակայն չեմ քայլել երբեք կռացած,
ես ապրեցի այն՝ ինչ կարողացա,
թող որ ուրիշը ավելին անի:**

Բայց դեռ ավելին անող չեմ տեսել, թող անեն: Բաց ճակատով եմ անցել այդ ամբողջ խոչ ու խուփի միջով. Ընկել եմ, բարձրացել եմ, եղել եմ գինով, բայց մարդ եմ ապրել: Ինձ կարող են ասել՝ այստեղ վատ բան արեցիր, բայց չեն կարող ասել՝ թույլ կամ կեղծ բան արեցի. անհնարին է, դա իմը չէ: Իմ գրական երկրորդ փուլը՝ 1979-1989 թվականները, ես ապրել եմ այդպես, պահպանել եմ իմ բառային ազատությունը՝ մինչև «սովետի» հոգեվարքը: Ես այդ տարիներին շատ դժվար ապրեցի. և՛ իմ ապրածի, և՛ այդ գրքերի համար ես այսօր բաց ճակատով եմ նայում:

Մեզանից հետո ուժեղ ու հաղթանդամ ուրիշ տղերք կգան

- Ձեր բանաստեղծական աշխարհի շուրջ մտորելիս, թե բարձրաձայն խոսելիս անհնար է շրջանցել «Մեզանից հետո...» բանաստեղծությունը: Միտք արարող մարդու մշտահողով ողբերգությունն է, որ գալիս են «նոր մարգարեներ» հռչակելով իրենց և գնում «աղոտ ու ծաղրալիր» իրար աջքով անող կրակների մշուշի միջով՝ «ուսերին տանելով իզուր ապրած մի շան կյանք»: Ձեր

պոետական կանխատեսմանը ինչպե՞ս եք վերաբերվում այժմ, հետադարձ հայացքով ինչ գնահատականի եք արժանացնում: Փորձենք քննել մեր վերջին 30-40 տարվա բանաստեղծական արժեքները նկատի ունենալով, պոետական ոգին արժևորելով:

- Բանաստեղծական ամեն փուլ իր ճակատային բանաստեղծությունն է ունենում: «Մեզանից հետո ուժեղ ու հաղթանդամ ուրիշ տղերք կգան» բանաստեղծությունն իմ գրական առաջին շրջանի ճակատային բանաստեղծությունն է, որը, ըստ էության, ողբերգական ավարտ ունի և հռչակագրական է:

**... հենց նա, հենց նա, եկողներից առաջինը,
նա, ով իրեն վերջին մարգարե հրջորջեց,-
կքայլի մի օր՝ տխուր օրվա մեջ,
ուսերին տանելով իզուր ապրած մի շան կյանք,
մի ամբողջ լղարած կյանք,
մի վաղուց արդեն լղարած կյանք,
հետո հոգևած կընստի մի տեղ, և ընտանիքի բարեպաշտ հայրերի
խուճապահար հայացքների տակ
սառած գարեջուր կխմի,
դանդաղ, ինքնիրեն մրմնջալով.
-Մենք ուժեղ, մենք հաղթանդամ, ազնվորեն անփույթ հագնված,
մենք եկել ենք, վաղուց արդեն եկել ենք,-
դուք չկարեցաք, մենք պիտի անենք...
... Եվ ձյունափոշին կամաց-կամաց կծածկի նրա խորշումած դեմքը,
և նրա տարտամ հայացքի առջև
հեռավոր շենքերի կրակները մշուշի միջից -
աղոտ ու ծաղրալիիր աչքով կանեն իրար:**

Ըստ էության մի խորտակված կյանքի ավարտի նկարագրությունն է, որ մենք եկել ենք, բայց ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա՝ պահանջված չենք: Հեռավոր շենքերի կրակներն աղոտ, որ ծաղրալիիր իրար աչքով են անում, որովհետև խորտակված մի կյանք է նստած իրենց առջև: Դա ամենևին էլ լավատեսական բանաստեղծություն չէ, ինչպես առաջին տողն է հուշում, վերջում նկարագրում է այդ ուժեղ ու հաղթանդամ տղաների ավարտը, և կյանքն ապացուցեց, որ ես ճիշտ եմ կանխագուշակել: Ալեքսանդր Թոփչյանն իմ առաջին գրքի վերաբերյալ մի շատ նշանակալից գրախոսություն տպագրեց «Գրական թերթում», որտեղ դիպուկ ու այժմեական մի դիտարկում է արել, թե Դավիթ Հովհաննեսն իր բանաստեղծության մեջ կանգնած է երեք ճանապարհների խաչմերու-

կում՝ ներկայի, անցյալի և ապառնի: Ետ է նայում՝ տեսնում է անցյալը, ապրում է ներկայի մեջ և կանխագուշակում է իր ապագան: Ասում է՝ հենց այդ բանաստեղծությունը՝ Նկատի ունենալով: Թոփչյանը ճիշտ էր տեսել բանաստեղծության ողբերգականությունը՝ անճար, անելանելի, դաժան ապառնին:

Եթե կանգնեմ Տիրոջ առաջ, և հարցնի՝ ի՞նչ ես արել (Գիլյոյանը մի բանաստեղծություն ունի, ասում է՝ եթե կանգնենք Տիրոջ առաջ, և հարցնի՝ ի՞նչ եք արել, ինքն ասում է՝ մենք մարդ ենք եղել, իսկ դո՞ւ) կասեմ՝ երեք բանաստեղծություն եմ գրել. «Մեզանից հետո ուժեղ ու հաղթանալամ», իմ առաջին շրջանի ճակատային բանաստեղծությունն է, «Քաղաքային ծմեռ»՝ Չալանկ շան մասին, իմ երկրորդ շրջանի ճակատային բանաստեղծությունը և «Հավերժական հայրը», որ իմ երրորդ շրջանի ճակատային բանաստեղծությունն է: Չալանկն, ըստ էության, հաստատում է այն, ինչ 1967-ին «Մեզանից հետո...» բանաստեղծությամբ ասել եմ, գրել եմ 1979 թվականին. Էլի նույն ողբերգական ավարտով: Բանաստեղծությունը շան մասին չէ, այն ամենի մասին է, ինչն իր տեղում չէ:

**Եվ շունն այդ կոչվում է ոչ թե արբշիռ ամառ,
ոչ թե գարուն կանաչ, ոչ թե աշուն շքեղ,
այլ կոչվում է ծմեռ, քաղաքային ծմեռ,
պատահական, շմած, տխուր ու մոլորված,
կամ կոչվում է քեզ պես մի Չալանկ, մի քած,-
որ, դրսում կուչ եկած, նվնվում ես դեռ,
կեղտոտ ու ինքնամատույց պոչիդ տակը բացած:**

Այսինքն՝ սարերից գեյխեդը, գամփո Չալանկն իջել է քաղաք ու կրակն ընկել. մարդկանց ճղճիմության, ցեխի, ձյան, ոտքերի տակ է ընկել ու պոչը՝ հետևը մտցրած՝ արթսրթում է՝ ողբերգական, ողորմելի: Իր տեղը չէ:

**Ախ, լսի՛ր ինձ, իմ շուն, իմ Չալանկ, իմ ծմեռ,
ես սիրում եմ քեզ, թեպետ որք ու անտեր,
քո ծծեր ով ցամաք, քո արգանդով չբեր
դու խեղճ ես, խեղճ մի ծմեռ - քաղաք իջած,
ես համբուրում եմ քո սև դունչը սառած,
բայց փախիր այստեղից, հեռացի՛ր, իմ Չալանկ,
չե՞ս տեսնում, ոտքի տակ քեզ տրորում ենք մենք:**

Ճիշտ այնպես, ինչպես 12 տարի առաջ գրված «Մեզանից հետո...»-ի բանաստեղծն էր նստած ծաղրայլի իրար աչքով անող շենքերի կրակների ու դեմքը ծածկող ծուռափողոս տակ:

Այդպես է եղել իմ հայացքը և այդպես էլ ավարտում եմ իմ երկրորդ

շրջանը, որը, կարելի է ասել, խորհրդային իրարամերժ, հակասական ու դաժան, սակայն շատերի համար գուցե նոստալջիկ ու հաճելի հիշողությունների դաշտ է: Ինձ համար և այդ հաճելին կա, և այն դաժանն ու ողբերգականը: Մի շրջան էր, որը ես ապրեցի, սակայն մարդու և բանաստեղծի նման ապրեցի, ինչ կանխատեսել էի իմ բանաստեղծությամբ, այն էլ եղավ: Ես, իմիջիայլոց, եղել եմ սերնդի հետ, այսինքն՝ պոեզիա եմ մուտք գործել մի քանի մարդկանց հետ 60-ականների երկրորդ կեսին, բայց անգամ, եթե սերնդով եմ մտնում պոեզիա, ապրում եմ միայնակ: Սերունդը մի ձևական, արտաքին հանգամանք է: Հիմա էլ երբեմն ասում եմ՝ իմ սերունդը, իմ սերնդակից պոետները, ինչը զուտ ձևական արտահայտություն է, սերունդն արտաքին, տեխնիկական համգամանք է: Պոեզիայում, և ընդհանրապես արվեստում, վավերական արժեքն ապրում է միայնակ, ինչպես ամբոխի մեջ անհատը, մենակը, որովհետև դա խիստ ինտիմ գործ է և ավելի ինտիմ, քան սեռական ակտը: Սեռական ակտը հնարավոր է մարդկանց աչքի առջև արվի, բայց բանաստեղծությունը, մարդու համար ամենաինտիմ գործը, ես չեմ պատկերացնում, որ արվի մարդկանց ներկայությամբ, դա շատ ինտիմ և միայնակ մարդու ակտ է. քո հետ ես և Աստծո հետ: Միայնությունը վավերական բանաստեղծի և ընդհանրապես արվեստագետի ճակատագիրն է: Այդ իմաստով ես շատ տարբեր եմ ապրել և չեմ եղել, այսպես ասած, օրինաչափ կամ օրինապահ անդամը: Ես մի բանաստեղծություն ունեմ, որ սկսել եմ 1967-ին և ավարտել 2004-ին, կոչվում է «Բողոք առ մոլորք»: Դա իմ ներքին ընդլզումն է, որ ունեցել եմ ամբողջ այդ տարիների ընթացքում՝ սերնդային, խմբակային մտածողության դեմ: Ես շատ առանձին եմ և իմ ճակատագրով եմ առանձին. իմ ճակատագրի և՛ տերն եմ, և՛ ծառան: Աչքիս առաջ մարդիկ իրենց բանաստեղծական դեմքը, կերպարը խորտակեցին, իրենց բանաստեղծական ինքնությունը խաթարեցին: Հոգին տվեցին տարբեր ձևերով, մրցանակի, կոչումի, պաշտոնի, շքանշանի հետևից վազելով՝ ծախեցին տող առ տող, բանաստեղծություն առ բանաստեղծություն իրենց տաղանդը, եթե անգամ ունեցել են, ինչը շատ կասկածելի է, քանի որ մեր գրական աշխարհում, բացի այդ ամենասոթ սերնդից, բոլորի կաշին գիտեմ դաբաղխանից: Բոլորն էլ իմ աչքի առաջ են սկսել, շարունակել և ավարտել: Այդ իմաստով ինձ համար անհայտ ոչինչ չկա բանաստեղծական անդաստան կոչված տիրության, թախիծի կամ լացի գրկում: Այդ իսկ պատճառով էլ ես ինձ միշտ առանձին եմ պահել, առանձին եմ զգացել և առանձին եղել իմ լավ ու վատի հետ, դժվարության ու հեշտության հետ: Այդ իմաստով ինչ կանխատեսել եմ իմ բանաստեղ-

ծովայամբ՝ լիովին իրականացել է: Այսինքն՝ դժվարին ճակատագիր, ողբերգական ընթացք, ավարտի մասին չեմ խոսում, որովհետև ես շարունակվող բանաստեղծ եմ, բայց մի բանաստեղծության մեջ իմ հորոսկոպի մասին խոսելով ասում եմ՝ արճիճը մետաղն է իմ, որ ինձ պիտի խոցի մի օր. այդ 9 գրամ արճիճը ինձ համար դեռևս պահված է: Պետք չէ ուղղակի իմաստով հասկանալ, թեպետ ես ուղղակի իմաստով էլ մի քանի անգամ հանդիպել եմ արճիճի, վերջին անգամ 1999-ի հոկտեմբերի 27-ն էր, երբ Ազգային ժողովի դահլիճում 18 ժամ նստել եմ ավտոմատի տակ և տղամարդավարի եմ ինձ պահել, բաց ճակատով նայել տեռորիստներին ու ամենածանր խոսքեր ասել իրենց: Սարսափում էին կողքիս նստածները, թե ես ոնց ես խոսում սրանց հետ. առավոտյան մի քանիսն էին մնացել, մյուսները փախել էին դահլիճից: Ես մարդկանց շատ տեղերում եմ տեսել, կյանքի շատ ու շատ հանգամանքներում դիմակը պատռել: Այնպես որ այդ օրը արճիճը կարող էր ինձ խոցել, բայց չի խոցել: Այդ 9 գրամն ինձ ամեն օր խոցում է, հատկապես վերջին 15 տարում, որը ես համարում եմ իմ բանաստեղծության երրորդ շրջանը: Ինձ համար իրականացել է, ուրիշների համար՝ չգիտեմ: Ես տեսել եմ, թե մարդիկ ինչպես են կյանքի արտոնությունների, բարիքների համար ծախել և մինչ օրս էլ ծախում են իրենց բանաստեղծական ոգին: Չարժի անուններ տալ, դրանք շատ են, իմ սերնդակիցների մեջ էլ կան. կրոնավորական, անսեռ, անարյուն. անմիտ, ոչ անտաղանդ են, ոչ էլ տաղանդավոր, սարի սմբուկի ընթացք են վարում և այդ ճանապարհին վաստակում են կոչումներն ու մրցանակները, բայց մրցանակը դեռ պոեզիա չէ: Մարդիկ կան, որոնց պետք է ասես՝ մրցանակն ստացար, հիմա մնաց որ պոեզիա գրես: Ոչ մրցանակ ունեմ, ոչ կոչում, ոչ էլ ձգտել եմ դրանց, միայն մի շքանշան ունեմ, «Վաչագան Բարեպաշտ» մեդալն է, որի համար շատ հպարտ եմ. Արցախյան ազատամարտին բերած իմ հրապարակախոսական և գրական նպաստի համար շնորհել է Լեռնային Ղարաբաղը, ոչ թե Հայաստանը: Իմ բոլոր գրքերը ներկայացվել են մրցանակի, բայց չեմ ստացել, որովհետև ես միշտ փակ և գաղտնի քվեարկության գոհ եմ. ճակատիս բան չեն կարողանում ասել, փոխարենը թաքուն ջնջելու տեղը, երբ գողունի նայում են՝ հանկարծ մարդ չտեսնի, այդտեղ հագուլդդ են տալիս իմ հանդեպ ունեցած իրենց կատաղությանը: Այդպես եմ ապրել և այդպես էլ պիտի ապրեմ: Վստահ եմ, հենց Նոր գիրքս դրվեց սեղանին, գրական աշխարհում նույնն է լինելու՝ ինչ ճահճի մեջ քար գցելիս. Նորից գորտերը պիտի կռվան: Շատերն են ինձ ասում՝ այ մարդ, ես բանն էլ մի ասա, էի, մենք էլ ենք լսում, տեսնում, բայց չենք ասում: Դեռ 80-ականների սկզբին եմ գրել.

**Ես խանգարում եմ բոլոր Նրանց, ովքեր ինձ չեն հասկանում,
բայց ես խանգարում եմ նաև Նրանց, ովքեր հասկանում են ինձ,
որովհետև այն ամենը, ինչ գիտեմ ես. գիտեն նաև իրենք,
սակայն լռում են, իսկ լռողին երբեք դուր չի գալիս,
երբ մի ուրիշն ասում է այն, ինչը որ ինքն էլ գիտե...
Ես խանգարում եմ, որովհետև անհավատարիմ հավատ եմ ուզում,
ես խանգարում եմ, որովհետև հավատացողի հավատին**

կասկածում եմ,-

և այսքան մարդու խանգարելուց հետո ես ո՞ւմ պիտի ապավինեմ...

Ինքս էլ գիտեմ, այդ կարգավիճակում, որ ինձ դրել եմ՝ առանձնացված, չեմ ասում առանձնաշնորհյալ կամ առանձնահատուկ, դաժան է։ Եվ իմ առանձին վիճակը, որին ինձ խաչել եմ, տասնամյակներ շարունակ չի ներվում։ Չի ներվում դրսում, չի ներվում սերնդակից գրչակիցներիս կողմից, չի ներվում վերևներում և՛ խորհրդային, և՛ ներկա, չի ներվում ներքևներում, անգամ իմ տանը, ինքս իմ կողմից չեմ ներվում։ Բայց այս եմ, ուրիշ կերպ լինել չեմ կարող, այդպիսին է իմ տեսակը, այլ կերպ ապրել չեմ կարող, այլ կերպ ապրեցի՝ կտրաքվեմ, կամ կնայեմ հայելու մեջ՝ կթքեմ իմ երեսին, կասեմ՝ սա ես չեմ, իմ իմացած բանաստեղծ Դավիթ Հովհաննեսն ուրիշ է։ Ապրում եմ իմ առանձին վիճակին համապատասխան, թեպետ ինքս ինձ այդ վիճակի մեջ գցելու համար էլ չեմ ներում, բայց ի՞նչ անեմ, սա եմ։ Ես այդ իմաստով հասկանում եմ բանաստեղծ ու չբանաստեղծին, Նրանց այդ տրտուկները, թոնթորանքը, դժգոհությունը, որ, այ մարդ, Աստված քեզ ամեն ինչ տվել է և դեռ այդքանն էլ բերում, լցնում ես, գրքեր ես տպում և դիմանում ես, չես խորտակվում, չես մեռել, չես անցել Լեթայի գիրկը։ Չի ներվում ինձ իմ ապրելակերպը, բայց այդպես եմ ապրում և այդպես էլ պիտի ապրեմ։ Զջերն են, որ ինձ հասկանում են, բայց Նրանք էլ չեն համարձակվում ապրել այնպես, ինչպես ես եմ ապրում։ Ծանր է, բայց իմ վիճակն է, ես դեռ ուրիշ երկրորդին չեմ ճանաչում, որ այդպես առանձին վիճակում ապրի և՛ արվեստում, և՛ գրականության մեջ։ Կռանալով, ստորանալով, իրենք իրենց ծախելով, դեմքը փոխելով, էլի չեն կարողանում հաղթող դուրս գալ, էլի տուժում են, ցածր ու ստոր են մնում։

**Ի՞նչ ընկերներ ունեի... Նրանց տեղը ով մնաց,
անիքնասեր, անպատիվ, ստորաքարշ ու ծախու,-
որ, փեշերիցս բռնած, անվերջ քաշում են ինձ ցած,
հարմար պահի-խրատում, հարմար պահի էլ-ծախում։**

Եվ ասում են չնայած, եթե կյանքը չստիպեր,
այսքան չէին ցածրանա գուցե նույնիսկ սրա Նք Է,-
ես չեմ կարող հավատալ. որովհետև Կյանքը մեր
հենց այն արժեքն է, որով Պոետին են միշտ չափել:

Քրոնիկոն

**90-ականներին գրված Ձեր բանաստեղծությունները, որ զայն-
րույթ էին, բանաստեղծի գոռոց, թուք, ապտակ, անեծք, անար-
գանք, հուսահատ ճիգ, անհորիզոն, մի խոսքով՝ մեր կյանքի
ծանրագույն, մի տեղ տրամաբանությանը չենթարկվող շրջանն
էր, որոնք ընթերցողին ներկայացվեցին 1996-ին «Քրոնիկոն» ժո-
ղովածուով: Հիմա ինչպե՞ս եք վերաբերում Ձեր այդ շրջանին և
այն ինչպե՞ս եք դիտարկում Ձեր բանաստեղծական ողջ ընթաց-
քի մեջ. օրգանական շարունակություն, թե՞ դուրս ցցված ազդ-
րոսկր, պոեզիա՞, թե՞ ժամանակի ավերակների վրա բանաստեղ-
ծի անհույս ոռնոց:**

- Ծատ ճիշտ ես նկատել՝ դուրս ցցված ազդրոսկր: Ըստ էության, իմ
պոեզիայի բնական ընթացքի և՛ պարագծի մեջ է, և՛ դուրս է. դա ար-
դեն չպոեզիա է, անտիպոեզիա է, բայց ոչ այսօր տարածում գտած, շրջա-
նառության մեջ դրված այն դատարկությունը, որ միամտաբար «անտի-
պոեզիա» են համարում: Այդ իմաստով «Քրոնիկոնին» շատ լավ բնաբան
կարող էր ստացվել դեռևս 1979-ին իմ «Անցյալ կորուսյալ» ժողովածուում
տեղ գտած մի բանաստեղծության, որտեղ պոեզիայի բնորոշումներն են
տալիս, և վերջին տողն է՝ «Պոեզիան այն է՝ ինչ պոեզիա չէ»: Այդ տողը
գրքի մի բաժնի բնաբան են ընտրել, որը հենց այդպես էլ կոչվում է՝ «Բա-
նաստեղծություններ ոչ տպագրության համար»:

Այո, սովորական, ընդունված առումով՝ պոեզիա չէ, կարող ես անվա-
նել ինչ ուզում ես, անեծք, հայիոյանք, աղաղակ, մեռնող մարդու, զոհվող
մարդու վերջին գոռոց, Նգովք: Այսինքն՝ 88-ից մինչ 98 թվականները ինչ
որ մեզ տրորում էր, մարդու կերպարից գցում էր, հետո նորից վերադարձ-
նում մարդու կերպարի, այդ վայրիվերումները՝ հոգեկան, ֆիզիկական,
քաղաքական, սոցիալական, բարոյական, այդ ամբողջ անկում-վերելք-
ները ես զետեղել եմ «Քրոնիկոն» գրքում: Սա այն սովորական բանաս-
տեղծական ժողովածուն չէ, որ, ասենք, քնելուց առաջ կարդում են, կամ
կարդում, քննարկում են՝ լավ է, վատ է, սա այդ պոեզիան չէ, սա է, որ
ես ասել եմ, և ծայրահեղ, բառային կոշտ, դաժան, անխնամ ատաղձով,
բառային ձևակերպումների մեջ, այսինքն, երբ ես գրում էի դա, ես բա-

Նաաստեղծ չէի, այդ տողերին թուղթը ո՞նց դիմացավ, ե՞ս ոնց դիմացա, ե՞ս ոնց մնացի՝ այդ տողերը գրեցի. գրել եմ մոմի լույսի տակ, խավարի մեջ, ցուրտ մատներիս վրա փչելով, ամառվա տապին, չորության, հոգևոր չորության, նաև... այդ անկումների, կործանվող աշխարհի, կործանվող բառի պոեզիան է. շատերը տպագրել են «Գարունում»: Երբ 98 թվականին գիրքն ամբողջացնում էի, շատ քիչ բան զետեղեցի, գործեր կային, որ չկարողացա ընդգրկել, ինքս կարդում էի և սարսափում՝ սա ե՞ս եմ գրել, ո՞վ է գրել, ի՞նչ ձեռք է, սա ի՞նչ նգովք է, ի՞նչ անեծք ու թուք է, արյունոտ, խորթ, ես այդ ի՞նչ եմ լցրել, սոսկալի, դժոխային մի բան էր, էջերը ոնց են դիմացել:

Շատ բաներ չզետեղեցի, որովհետև դեռ մեջս էին դրանք, վախեցա, այսօր «Քրոնիկոնը» չեմ էլ ուզում տեսնել, ես հիմա էլ չեմ կարողանում բացել: Նոր եմ տպագրել ու այդ գրքին դժվարությամբ եմ մոտեցել, չեմ ուզեցել և մարդկանց, որ նվիրել եմ, նույնն են զգացել՝ ասում էին՝ վախեցնում ենք ձեռք տալ, այս ի՞նչ ես գրել, ի՞նչ ես արել: Իմ այդ հոգեվիճակն էր պատճառը, որ ես շատ գործեր չզետեղեցի ժողովածուում, երկու երրորդը թողեցի սեղանի տակ:

Հետո տարիներ անցան, տարիների հետ կարծես համակերպվեցի, ավելի հանգստացա, նորից քննեցի իմ մեջ, անտիպները նայեցի, և հիմա, տասը տարի անց գրքից դուրս մնացած այն երկու երրորդ մասը, նաև մամուլում տպագրված հոդվածներ, պամֆլետներ, հրապարակախոսությունն ընդգրկել եմ, նախորդի հետ միասին տպագրելու եմ «Քրոնիկոնը» ամբողջական, որպեսզի այդ տարիների ընդհանուր տպավորությունը ճիշտ լինի, որովհետև գիրքը այդ տասը տարվա քրոնիկոնն է, ենթավերնագիրն էլ լինելու է՝ 1988-1998: Սա իմ երրորդ շրջանն է և ամենածանր ու դաժան շրջանը:

Ես ամեն ինչ եմ,

Ամենուր ու անվախճան...

-«Հավերժական հայր», ինչպես Դուք որոշեցիք, նույնպես Ձեր ճակատային բանաստեղծություններից է, Ձեր գրականության վերջին և շարունակվող շրջանի, մեր այն պատմական ժամանակահատվածի, երբ Հայաստանն անցավ մի շարք փորձությունների միջով, ճակատագրի նոր դառն ու քաղցր բաժակների ճաշակումով. հեղաշրջում, անկախություն, պատերազմ՝ իրենց բոլոր հետևանքներով: Այդ կրակների միջով անցնող հայի դիմակայող ու խտացած ոգին է՝ նոր ու հավերժական դիտարկումով: Հայի կերպարը մշտապես եղել է մեր գրականության, առհասարակ մեր գրավոր ու քարտեղեն մշակութի առանցքային թեմա-

Ներից մեկը, եթե ոչ գլխավորը: Ինչպե՞ս եք բնութագրում ձեր պատկերացրած հային, ով իր կերպարով մեզ պետք է ուղեկցի պատմության քառուղիներով՝ ժամանակի խաչմերուկներում:

-Հայի կերպարը մեր գրականության մեջ ներկայացված է բոլոր լավագույն գործերում, բայց ամենաբնականը, ճիշտը, թեպետ հակասական ու իրարամերժ, ինչպես հայի կերպարն է, Դ. Դեմիրճյանի «Հայը» փոքրիկ էսսեն է, ավելի լավ չենք նկարագրել: Այդպիսի մի փոքրիկ գործ էլ ունի Սարոյանը, ասենք՝ «Հայը և հայը», բայց Դեմիրճյանը բարձրակետն է: «Հավերժական հայը» բանաստեղծությանն անդրադառնալով պիտի ասեմ՝ դա այն բանաստեղծությունն է, որը ես իմ անձնագիրն եմ համարում, այսինքն՝ դա ես եմ անցյալի, ներկայի, ապառնիի համար, դա Դավիթ Հովհաննեսն է, ով հավերժական հայն է: Ես հայի հավաքական կերպար չեմ ուզեցել ստեղծել, դա ավելի շատ ես եմ, և հենց այդպես էլ ասում եմ.

**Ահա ես եմ, Հավերժական Հայը, կանգնած Մեծ
Երկրաշարժի մեջտեղում, արևամած աչքերս հառած
Մասիս սարին,
Երբ ինձ խփում են՝ տարերքը տակից, Աստված
Վերևից, թշնամին դեմից, բարեկամը մեջքից,
Արևմուտքն աջից, Արևելքը ձախից,
Բայց ես չեմ վերջանում,
Ես տեսնում եմ արդեն Ահեղ Դատաստանի օրը,
Բայց ես Հայաստանն եմ, և ինձ սպանել
Հնարավոր չէ, որովհետև ես ամեն ինչ եմ, ամենուր
Ու անվախճան...**

Այդպես սկսվում է բանաստեղծությունը և ավարտվում է այս տողերով.

**Եվ նա, ով կերավ իմ հացն ու չկշտացավ, խմեց
իմ գինին ու չհագեցավ, լսեց իմ Աստծուն ու
չհավատաց, տեսավ ինձ ու չճանաչեց-
Տարերք լինի թե Աստված, թշնամի թե բարեկամ,
Արևմուտք թե Արևելք-
Ցածր է իմ առաջ, և պիտի պատասխան տա ինձ՝ Ահեղ
Դատաստանի օրը,
Որովհետև ես Հավերժական Հայն եմ ու Հայաստանը,
Որովհետև ես ամեն ինչ եմ, ամենուր ու անվախճան:**

Բանաստեղծությունը նախապես վերնագրված էր «Ես ամեն ինչ եմ,

ամենուր ու անվախճան», գրվել է 1989 թվականի հունվարի 31-ին, հոգեկան հուսալքման, շատ ծանր ապրումների և խորը տվայտանքների, տանջանքների օրերին: Նոր էր երկրաշաժը եղել և այդպես՝ Հայաստան, Ղարաբաղ, երկրաշարժ, տեղահանություն, ավեր, ավար, անհուսություն, ցուրտ, խավար... ինչը որ տեսանք մենք այդ տարիներին: Եվ հանկարծ ներսումս այդ ըմբոստ ալիքը բարձրացավ. ես չեմ վերանա, չեմ վերանա-լու աշխարհի երեսից:

Բանաստեղծության մեջ ծանրամարտ զգացողությունները հաջորդում են իրար. զավակ եմ մեռած, մայր եմ փլատակված, հայր եմ խելագարված, չթաղված և այլն, և այլն: Այդ ամբողջը ես եմ. ինքնաթիռ եմ խորտակված, խոյակ եմ խախտված, բանաստեղծ եմ խաչված և աստված եմ եսացած: Այս աստվածամերժ, չասեմ՝ աստվածամարտ ասեմ՝ արտահայտությունը, և ակնդ դատաստանի օրը ես պիտի նստեմ Աստծո փոխարեն: Սա այն տողերի թվին է պատկանում, որ գրելուց հետո ցնցվում ես, ոնց ես կարողանում այդպիսի բաներ գրել, ոնց ես կարողանում մտածել՝ աստված եմ կայացած: Դու, այդ պահը, որ աստվածամարտ արտահայտությամբ մաքրվում ես ու էլի Աստծո առաջ ես կանգնում: Եվ այդ տողը ես ինձ ներում եմ: Իմ հոգեկան պահն է, իմ լավագույն բանաստեղծությունն է, ավերի, ավարի, կործանման պահին ըմբոստացած վեր եմ կենում, բայց էլի ես մնում եմ քրիստոնյա, ոչ Աստված եմ եսացած, ոչ էլ նրա հրեշտակն եմ, հակառակը՝ մահկանացու եմ, խոնարհ քրիստոնյա, թեպետ Աստված ու սատանա, հրեշտակն ու դևը միշտ կռիվ են տվել իմ մեջ և դեռ հարց է, թե ով կհաղթի:

Բանաստեղծությունը ես եմ և ես, իսկապես, ինձ նույնացնում եմ Հայաստանի հետ: Աստված եմ եսացած: Սա ինձ պետք է ներվի, ինչպես ներվել է Դուրյանին՝ «Թող անե՞նք ըլլամ ու կողո՞ խրիմ, ոխերիմ Աստված», ինչպես ներվել է Տերյանին. «Դահճիս կանգնած տեսա, ասի՝ արևս առ»: Այս տողերը այսօրվա համար չեն ասված, ինչպես իմ բանաստեղծությունն է՝ երեկվա համար և վաղվա համար՝ գրված այսօրվա մեջ:

Իմ իրարամերժ, հակասական ընթացքն է, երկրիս հակասական ընթացքն է, պատմությունն է, կերպարն է, և իրարամերժ ու հակասական ներկան ու ապագան եմ կանխագուշակել: Բայց այսպես ես պիտի կանգնեմ, ես պիտի դատեմ, որովհետև ես հավերժական հայն եմ ու «Հայաստանը»:

Բանաստեղծությունը տպագրվել է 1989-ին լույս տեսած իմ «Աղետի գոտի» ժողովածուում, նաև թարգմանվել է վրացերեն և ապրիլի 24-ին տպագրվել Վրաստանի պաշտոնաթերթում: Հետագայում լրամշակվել և

տպագրվել է «Գարուն» ամսագրում, այդ տեսքով էլ լույս կտեսնի իմ նոր գրքում՝ իբրև ճակատային բանաստեղծություն, որը «Քրոնիկոնի» ամբողջական տարբերակն է:

Բարդ կառուցվածքով բանաստեղծություն է. կա և՛ որոշակի աշխարհագրություն, և՛ մոգական թվերի խաղ թվարկումներ, հերթագայումները շատ որոշակի հաշվով են արված՝ 33-ական, Քրիստոսի ապրած տարիներն են, որոշակի սիմվոլիկա, և այդ ամենը մտածված է արվել:

Իմ կերպարն է սա, ես եմ, և դա Հայաստանն է: Սա է իմ բանաստեղծական անձնագիրը, սրանով ես կարող եմ կանգնել Աստծո առաջ, մարդկանց առաջ, իմ խղճի առաջ: Կրկնում եմ, սա իմ երրորդ շրջանի ճակատային բանաստեղծությունն է, որը 1988-ից մինչև 1998 թվականն է: